

## ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Սարգսյանի ուղերձը Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ

10.11.2014



Սիրելի հայրենակիցներ,

Նոյեմբերի 10-ը Հայաստանի Հանրապետությունում նշվում է որպես Տեղական ինքնակառավարման օր:

Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ սրտանց շնորհավորում եմ Վայոց ձորի մարզի բոլոր համայնքների ղեկավարներին, համայնքների ավագանիների անդամներին, համայնքային ծառայողներին, համայնքային ենթակայության կազմակերպությունների աշխատակիցներին: Տեղական ինքնակառավարման օրն իրապես տոն է նաև համայնքների բնակիչների համար, քանզի տեղական ինքնակառավարման մարմինները, որոնք ձևավորվում են նրանց վստահության քվեով, կոչված են լուծելու համայնքի բնակիչների սոցիալական, կենսական, կրթամշակութային և համայնքային նշանակության խնդիրները:

Երկրում ժողովրդավարական համակարգի զարգացումը պայմանավորված է նաև ՏԻ մարմինների կողմից իրականացվող հանրային ծառայությունների համալիր կազմակերպմամբ, նրանց կողմից լիազորությունների լիարժեք կատարմամբ, իրավասությունների անթերի իրականացմամբ:

Տեղական ինքնակառավարման համակարգի զարգացումը 1996 թվականից, երբ Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցան տեղական ինքնակառավարման մարմինների առաջին ընտրությունները և պաշտոնապես ուժի մեջ մտավ «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը, կրում է շարունակական բնույթ: Համոզված եմ, որ ժամանակի հետ ՏԻ մարմինների գործունեության արդյունավետությունը կհասնի ցանկալի տեմպերի և մակարդակի: Եվս մեկ անգամ շնորհավորում եմ բոլորիս Տեղական ինքնակառավարման օրվա կապակցությամբ և մաղթում մեր տեղական իշխանություններին աշխատանքային բարձր պատասխանատվություն, վճռականություն իրենց իրավասություններն իրականացնելու պատվաբեր ճանապարհին: